ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

04.04.2014թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77^1-77^6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի մարտի 6-ի N 73-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, սոցիալական ապահովության բաժնի պետ Վալերի Ջաղինյանի, բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ Սեյրան Ծատուրյանի, ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արտավազդ Բեջանյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Մարինե Դավթյանի, մշակույթի բաժնի առաջատար մասնագետ Միհր Մելիքյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ Սուրեն Ավետիսյանի, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ Ժիրայր Բասմաջյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում՝ սոցիալական պաշտպանության, արտակարգ իրավիճակների, կոմունալ, առողջապահության, ՏԻՄ-երի լիազորությունների, պաշտպանության, քաղաքաշինության, կրթության, մշակույթի, ՔԿԱԳ, հողօգտագործման, տրանսպորտի և կապի, առևտրի և ծառայությունների ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ստեփանավան համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Վալերի Ջաղինյան _____

Սեյրան Ծատուրյան _____

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Գագիկ Հախինյան _____

Անահիտ Բարոյան _____

Մարինե Դավթյան _____

Միեր Մելիքյան _____

Էդգար Հախվերդյան _____

Սուրեն Ավետիսյան _____

Ժիրայր Բասմաջյան _____

Համայնքի ղեկավար՝
Միքայել Ղարաքեշիշյան _____